# WordWall

WordWall գործիքների շնորհիվ կարող եք ստեղծել տարաբնույթ ինտերակտիվ վարժություններ, ինչպես նաև թեստեր, որոնց օգնությամբ կարող եք գիտելիքների ստուգման գործընթացը դարձնել առավել դյուրին և հետաքրքիր:

Քայլ 1. Անհրաժեշտ է կայք մուտք գործել www.worldwall.net հասցեով, գրանցվել էլ. հասցեի միջոցով կամ մուտք գործել գործող հաշիվ:

Գրանցվելու համար գլխավոր պատուհանում պետք է սեղմել **Sign Up To Start Creating** կոճակը:

Եթե արդեն գրանցված եք մուտք եք գործում պատուհանի վերևի աջ անկյունում գտնվող **Log In** կոճակով:

**WordWall** միջավայր մտնելուց պետք է նախապես գրանցվել: Կարող եք գրանցումը իրականացնել նաև **Google** հաշվով:




Բացված էջում ցույց է տրվում առաջարկվող վարժությունների տարբերակները:




Քայլ 2. Սեղմելով քայլ 1-ում նշված **See example Resources** կոճակը՝ կտեսնեք կայքի կողմից առաջարկվող օրինակները և կարող եք փնտրել հանրային նյութերը:

Որպես օրինակ ուսումնասիրենք **Random Wheel** ինտերակտիվ վարժությունը:




Բացված էջում ցույց է տրվում առաջարկվող վարժությունների տարբերակները:

Որպես օրինակ ուսումնասիրենք **Random Wheel** ինտերակտիվ վարժությունը, այդ նպատակով սեղմել այդ հրամանին:




1. **Activity Title** դաշտում ներմուծել վարժության անվանումը
2. **Instruction** դաշտում ներմուծված տեքստը կերևա անիվի կենտրոնում
3. Ներմուծք առաջին հարցը, 2-րդ հարցն ավելացնելու համար սեղմենք +**Add an item** կոճակը
4. Կարելի է ավելացնել նաև նկար հետևյալ կերպ




1.Վերևի աջ անկյունում սեղմել upload հրամանը, բացվում է համակարգչից թղթապանակ, որտեղից ընտրում եք նկարը:




Ավելացնել բոլոր հաջորդ հարցերը և վերջում հաստատել **Done** սեղմակով:

Բերենք հարցաշար ստեղծելու մեկ օրինակ ևս՝




Քայլ 3. Բացված պատուհանում կարող եք տեսնել ձեր գործունեությունը և ստեղծել ևս մեկ նոր նյութ՝ **Create Activity** կոճակի միջոցով:




Քայլ 4. Անհրաժեշտ է ընտրել ձևանմուշ և ստեղծել նոր աշխատանք: Օրինակ՝ **Match Up** գործիքը:




Քայլ 5. Անհրաժեշտ է աշխատանքին տալ անվանում, գրել բառը և վերջինիս բացատրություն (**Match Up** գործիքի դեպքում):

Քայլ 6. Հնարավորթյուն ունեք 3-ից 30 բառ ավելացնել և վերջում սեղմել **Done** կոճակը:







Քայլ 7. Յուրաքանչյուր բառին հնարավորություն ունեք նաև կցել նկար:




Քայլ 8. Խաղը սկսելու համար պետք է սեղմել նշված կոճակը: Հնարավոր է նաև տարածել աշխատանքը՝ **Share** կոճակի միջոցով:




Քայլ 9. Հարցաշարը սկսելուց հետո անհրաժեշտ է յուրաքանչյուր բառ տեղադրել իր համապատասխան տեղում և սեղմել **Submit Answers** կոճակը:




Քայլ 10. Խաղը հնարավոր է տարածել հանրային տարբերակով կամ միայն ձեր աշակերտների հետ:




Քայլ 11. Կարող եք արտածել հղումը և տարածել անհրաժեշտ հարթակներով: